

Ա Ն Ա Ն Ո Ւ Ն



Ես անուն չունիմ — խոնաւ խըխըլուկ տան

Աղջիկն եմ ես գրեհչիկ.

Անիծեալ է քնտանիքս և վատագոհի,
Բայց իմ մէջըս կը բուռնուի բոց մ'աննըխուն:

Անըզգամ գաճաճ մ', հրեշտակ մ'ազօթաւոր
Կը հետեին քայլերուս:

Լեռն ու դաշտ իմ մըտածումըս կ'արշաւէ,
Մածէպակ պէս բոցալունչ ձիտն վըրայ:

Անըծուած մ'եմ ես սիրոյ ուստիւթեան,
Անուշութեան և ուժի.

Անգիւնդին զիս աղշամուղջը կը քաշէ,
Կը յուզուիմ երբոր մանկիկ մը փոյփայեմ:

Թարգմ. Հ. Արխստակէս Վ. Զասգամովիւսմ

Կը ծիծղամ, երբոր մըտնէ դժբաղդութիւն
Իմ տրեակիս դուռնէն ներս.
Կը ծիծղամ, երբ ընկեցիկ եմ և նեղուած,
Անըսփոփ և անզրարթ, կը ծիծաղիմ:

Սակայն խոնջ և դողդոջուն ծերերու վրայ,
Հացկարօտին վրայ, կու լամ.
Կու լամ հիւժ տըղիկներու վրայ և նհար,
Անծանօթ բիւր վիշտերու վըրայ, կու լամ:

Եւ երբ լացը սըրսէս դուրս կը զեղանի,
Խիզախ երգովս ուսնսովոր,
Որ կուրծքիս մէջ և բերնիս վրայ կը թըրթռայ,
Կը նետեմ բոլոր հոգիս պատառ պատառ:

Հոգը՝ գայն ով որ լըսէ. և վատ նախանձ
Եթէ ծեծէ զիս, իսպթէ,
Կ'անցնիմ բաղդը զըրգնելով և չեմ նայի,
Եւ ինձ չի հասնի սըլաքը թունաւոր:

ԱՍԱ ՆԵԿԻՐԻ

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ի Գ Ո Ր Ծ Ե Ր
Մ Ե Ր Մ Է Զ

Ամէն ցեղ ունի թանգարան մը ուր կը ցուցադրէ իր ազգային տաղանդներու գեղարուեստական գործերը: Մենք մեր հողէն օտարացած ենք, ու մեր գեղարուեստի նոր ներկայացուցիչներն ալ օտար աստղերու տակ կ'ապրին: Վենետիկի միջազգային ցուցահանդէսին մամուլի տեսուչը իմ մէկ բողբոլս վրայ կը պատասխանէր ինձի. « Շահինը կ'անուանենք թուրք արուեստագէտ, զի թուրքիայէն է...: Եւ սակայն այդ ցուցահանդէսին մէջ ծագումէն սկսեալ մինչև ցայսօր ոչ մէկ թուրք մահմետական արուեստագէտի գործն է ցուցադրուած: Դարձեալ Հայն էր որ թուրք գեղարուեստի ներկայացուցիչն կ'ըլլար: Մենք ունինք արուեստագէտներ, սակայն ունինք արուեստի գլուխ գործողներ որոնք անկախօրէն թարգմանն ըլլան զուտ հայկական հանճարի: Ահաւասկ կէտ մը որ մտածել կու տայ: Գերմանիան ունի իր Կլիքը որ կը ներկայացնէ իր ցեղին տպաւորիչ երաժշտութիւնը, և իտալիան ունի իր Վէրտինի որ ցեղին անոյշ զգայնութեան թարգմանն կ'ըլլայ: Եւ կ'ըսենք, թէ գերմանական երաժշտութիւնը առհասարակ մաթեմատիկական ազդեցութիւն մ'ունի, իսկ իտալականը հոգեյոյզ զգացմունք: Ուրեմն երկու ցեղերուն մէջ արուեստը իր յատուկ գոյներով յայտնուած է: Մենք ունինք արուեստագէտներ, բայց ո՛չ մէկը կարող է ներկայացնել ամբողջ ցեղին յատկանիշ գեղարուեստական ընդհանրական հանգամանքը: Խօսքս ժամանակակից գեղարուեստի մասին է, ան տարակոյս մեր Հին հարտարապետութիւնը, և Հին երգեցողութիւնը և





Վիեննայի 1731ին տպուած Ս. Գրիգոր Լուսավորչի պատկերն և Ս. Էջմիածնի տաճարին նախկին ձևը

նոյն իսկ բնաշխարհի գեղջուկ գաւառական երգերը կը կրեն յատուկ դրոշմ մը, որոնք ցեղին սրտին ու մտքին և հանճարին պտուղներն են:

Երբ կը հաստատուի որ վաղեմի շրջաններուն մէջ մենք ունեցիր ենք մեր բնիկ ճարտարաւոճաստը, մեր բնիկ երաժշտութիւնը, և յետոյ կը տեսնենք բացարձակ ամլութիւն, բնաւ չենք զարմանար. զի հոն ուր բնական կամ անբնական հարուածները կը մարեն ցեղի մը յառաջադիմութեան խանդը, կը մարին նաև գեղարուեստի ճաշակը, գեղեցկագիտութեան կորուրդը. հայր կարծեմ նախանձին շրջաններ չէր բոլորած իր անկախութեան օրերէն վերջը, բնականաբար չէր կրնար խաղաղ սրտով մտածել գեղարուեստի վրայ:


Արտաշէսի փառքը կը դրուատեն Գողթան երգիչները. բանաստեղծութիւնը նոյն ատեն իր անկաշկանդ տիրապետող թափով յայտնի կ'ըլլայ. հայ գերութեան անկման շրջանին կը լսենք ողբական քնարերգութիւն մը. Շնորհալին կ'ողբերգէ. քերթողական շրջանը ստեղծագործող խանդոտութիւնը այլևս կորսնցուցած է:

Ընդհանրապէս ամէն ազգաց մէջ կենցաղի երևոյթները քիչ շատ նման են, ուրախ կամ տխուր հանգամանքներով կերպարանափոխուած է գեղարուեստի վիճակը. Նախ պարզուկ նահապետական կեանք մը, որուն յետոյ կը յաջորդէ աշխարհակալութեան ձգտող իւրոիտ հոգեբանութիւն մը: Ինչպէս Աթենացին, նոյնպէս նաև Հայաստանցին այդ շրջաններուն մէջ համահաւասար կենցաղավարութիւն մ'ունէին: Նահապետական շրջաններուն մէջ այդ երկու ցեղերն շատ համեստ կենցաղ մը ցոյց են տուած, սակաւապէտ են՝ եղած, կերակուրին հագուստին պարզ, կթեղէն ուտելիք և զգեստին շապիկ մը և կամ անասունի մորթ մը. բարբերին և առաքինութիւններն ալ նոյն, մենամարտող, մրցողներ են եղած, և նոյնպէս գողնալու մէջ մի և նոյն միջոցներն են գործածած. որմերը կը փորէին և տուներ մտնելով կը գողնային, այդ գողերը կը կոչուէին որմափոր *perceur de murs* *.

Մրցանք, պար ու երաժշտութիւն ամէն ցեղերու մէջ հասարակաց զուարճութեան համար գոյութիւն են ունեցած, և ատոնց խնամք տանելով ինքնին գեղարուեստի մշակութիւնը կը սկսէր: Ընտանեկան մեծ ուստիւ էր երբ երիտասարդ մը գերագանցօրէն քաջ կը հանդիսանար մրցանքի մէջ: Հանդիսականներու առջև կը հանեն ծերունի հայր մը Գիւգորաս՝ և ժողովուրդը կը ծափահարէ, զի մի և նոյն օրուան մէջ իր երկու քաջարի երիտասարդ զաւակները մրցումի մէջ յաղթանակած էին, հայրը յուզումէն կը մեռնի. իր զաւակները մրցանքի համար պահանջուած ամէն կատարելութեամբ օժտուած էին, և պարծանք հայրենիքին: Հին ատեն յատկապէս մեծ կարեւորութիւն կու տային մարմնոյ շարժումներն. մարմնամարզի, մրցումի ատեն ամբողջ մարմինը երաժշտական ներդաշնակ երևոյթ մը կ'առնէր, ահա՛ այդ պարագայ մըն էր ուր ժողովուրդը հանդիսատես կ'ըլլար արուեստի իրական ուսումին:

Մեր ազգային պատմութեան մէջ պարծանքով յիշուած է մեծն

* Ինչպէս ըսուած է « Կցորդ ամենայն աւագակաց, և որմափոր աւագակաց » (Լսանն). Գողթեան տեսակը կը կոչուէր Որմափորոյքեան. « Ի սպանութեան և յորմափորոյքեան զամենայն ժամանակ կենաց իւրոց ծախեալէ » (Երգն.):



Ագրապի Մանուկի շինքը

Տրդատի մրցումներու քաջութիւնը, անի՛ ըստ պատմութեան, Հոռոմի մէջ Ուլիմբիական խաղերու դիւցազն է եղած, մէկ ձեռքով վայրենի ցուլի եղջիւրէն բռնած դուրս կը հանէ եղջիւրը անասունին գլխէն, ու վիզը ուրերիով զանի կը սպաննէ, և կառարշաւի ատեն մրցակցին կառքը կը կեցնէ կառքին ետեւէն ամբապինդ բռնելով: Եւ ցեղին մէջ ըմբշամարտութեան հանդէսները վաղեմի ժամանակներէն սկսեալ մինչև մեր օրերը հասած են: Հանդէսները ամէն դարերու և ցեղերու մէջ ուշագրաւ են եղած, ու անոնց նկարագրութիւնը նկարիչներու և գեղապաշտ գրողներու նիւթ են եղած. անմոռանալի է Յուդիթի արիական քաջութիւնը, որով անի կրցաւ Հոդեփեոնեսի գլուխը կտրել ու փրկել հրէից ազգը. կարելի է երևակայել թէ ինչ աստիճան կարեւորութիւն տրուած էր մրցանքի, որով նաև օրիորդներն ի պահանջել հարկին զմայլելիօրէն կը կարգաւորէ և քաջագործութեամբ դիւցազնական մը հանդիսանալին: Հետզհետէ սքանչելի մէկ պարով կը զլխատուի մեծ Կարապետն Յովհաննէս, գրականութեան ու գեղարուեստի մէջ կ'անմահանայ կարգաւորին համբաւը: Ու Հայաստանի եկեղեցիներուն մէջ ամէն կիրակամտի իրիկուն «Լոյս զուարթ» թրթռուն հոգեզմայլ երգերէն վերջը, խունկերով անուշարոյր տաճարներուն մէջ կը յիշատակուի այդ լպիւրջ պարը «Յաւնօրէն գինարբուսն մոլեգնեալ Հերովդիադայ, ի պարգևի մասին խնդրէր զգլուխ մարգարէին, շիջուցանել զարուսեակն և զանաղօտ լապտերն»... Պրանասցին Պիօպէր իր մէկ վէպին նիւթ կ'ընէ Ս. Յովհաննէսի զլխատումը, և այդ ծանօթ է «Հերովդիա» տիտղոսով. գեղարուեստի գեղապաշտ էջ մըն է Հերովդիայի պարելուն նկարագրութիւնը: Ամէն արուեստագէտը հին և նոր, միշտ յատուկ գուրգուրանքով ու խնամքով կարեւորութիւն են տուած մրցանքի նկարագրութեանց. Հ. Բագրատունին ևս իր «Հայկ» դիւցազներգութեան մէջ ըմբշամարտութեան և մենամարտիկ խաղերուն համար զործածած է իրապաշտ թանձր գոյներ. պատմական վիպագրութեան մէջ երբ վէպին նիւթը հին կեանքէն առնուած է, միշտ պարերու նկարագրութիւնը անհրաժեշտ է նկատուած: Տաղանդաւոր ողբերգու Սոփոկլէս՝ պատերազմէն դառնալու ատեն հանդիսականաց առջև մերկացած կը պարէ Ապոլլոնի յաղթական երգն նուագելով:

Հին ազգերը նորածին մանուկներու գեղեցկութեան համար յատուկ խնամք են տարած. ու մարմնամարզը բարեձև մարմին ու գեղեցիկ շարժումներ մը տուած է մարդկութեան. հին ատեն գեղեցիկը աստուածացուցած էին: Սիկիլիայի մէջ երիտասարդ մը իր զմայլելի գեղեցկութեան համար կը պաշտօնի իրբև աստուած և մեռնելէն վերջը ժողովուրդը անոր վրայ բազին մը կը կանգնէ. Հերովոստ այսպէս կը գրէ իր պատմութեան մէջ:

Հին հելլէն արձանագործը յունական բարեկազմ մարմինները քանդակեց մարմարներով, ատոնք վերջը օրինակներ եղան ապագայ արձանագործութեան՝ այն ատեն երբ իրապաշտ արձանագործութիւնը մոռցուած էր և իրական ու քնական օրինակներէն չէր առնուէր ընդօրինակելի առարկան: Համանման նաև Հռովմէական կայսերաց շքրջաններուն՝ մեծ կարեւորութիւն տրուած է մարմնոյ գեղեցկութեան, մարզանքները վայելչակազմ մարմիններ կը պատրաստէին, ու արձա-

Նագործը իր առջև կ'ունենար այդ կատարեալ գեղեցկութիւնները զոր կը քանդակէր հրաշալի արուեստով. Հոովմ այցելողը գեղարուեստական թանգարաններուն մէջ տակաւին կը տեսնէ այդ արձանները որ դարերով շրջակայ երկիրներու մէջ անոնք թարգման կ'ըլլան հին գեղարուեստի լոյսին և հանճարին:

Հին արձանագործութեան շնորհիւ կարելի է գաղափար մը կազմել թէ ի՞նչ աստիճան մարմնամարզը կրցած է գեղագարդել մարդու կազմուածքը. օրինակը կը տեսնենք Աղեքսանդր մակեդոնացիին բիւզանդական շիրմին վրայ:

*
* *

Առ հասարակ ամէն ցեղերու մէջ արուեստի ծագումը մեծ կապակցութիւն ունեցած է կրօնական կեանքի յեղաշրջումին հետ. ամէն ատեն ընդհանրապէս կրօնքն է եղած որով արուեստը իր յատուկ փուլերը յայտնած է:

Այն օրէն ի վեր որ մենք հայերս ունեցած ենք մեր պատմական Հայաստանը՝ մեր քաղաքական զարգացումին մեծապէս ազգած են նախ իրանեան, երկրորդ ասորական և երրորդ յունական արուեստները և գիտութիւնները: Քրիստոնէութիւնը, ինչպէս ամէն տեղ, այսպէս նաև մեր երկրին վրայ երրորդ դարուն մէջ գաղափարի և կեանքի հզօր յեղաշրջում մը մտցուց: Հիթանոս և քրիստոնեայ հայութեան միջև ծագած հակառակութիւնները զարգացուցին հայ անհատին գիտակցութեան կարողութիւնը: Եւ օտար քաղաքականութեանց ոտնձգութիւնները մեր մէջ արթնացուցին հայկական հայրենասիրութեան մարդու զգացումը:

Պատմական մանրագնին հետազոտութիւնները կը հաւաստեն որ մենք վաղեմի դարերու մէջ ունեցեր ենք զգալիօրէն քաղաքակրթութիւն մը՝ երբ իրանեան ազգերը երկարատեւ ազգած են մեր վրայ, ու իրաւամբ ըսուած է որ մենք պահ մը բոլորովին իրանեան ենք դարձած, և ատով է որ մեր Արշակունի ոստանները ու քաղաքները կը կրեն պարսկական անուններ, ինչ որ դիտել կու տայ Հիւրշման իր հայ. քերականութեան մէջ:

Հիթանոս հայութիւնը իրանէն փոխ առած էր նաև աստուածները՝ ամենէն առաջ «Մեծն և արին Արամազդ, արարիչն երկնի և երկրի», որ էր իրանեան ցեղէն Ահուրամազդա կոչուածը: Հայկական Արամազդը ունէր իր բազինը Դարանաղեաց գաւառին Անի ամրոցին մէջ. թագաւորական գերեզմաններուն մէջ էին Արամազդայ բազինները, զդեակով ամրացած, ուսկից կարելի է հետեցնել որ անոնք կարևոր շէնքեր էին, քանի որ արքունական շիրմներուն մէջ կանգնուած էին, և անշուշտ իրանեան ճարտարապետութեամբ գեղագարդ և շքեղ շէնքեր են եղած, որոց մասին պատմութիւնը կը լռէ: Արամազդայ այդ բազիններուն համար Ագաթանգեղոսի մէջ կը կարգանք այս տողերը. «Ապա երթեալ հասանէր յամուր տեղին յանուանեալ Անի, թագաւորական կայանսն հանգստոցաց գերեզմանաց թագաւորացն Հայոց, և անդ կործանեցին զբազինսն ևս զիցն Արամազդայ՝ հօրն անուանեալ զիցն ա-

մենայնի»։ Արամազդը ունեցած է մեհեան—ղղեակներ ուր թաղուած են հայ քաջազուն թագաւորները։

Մեր մէջ պաշտուած է նաև Արամազդայ որդին Միհր, որուն համար հեթանոս հայութիւնը մեհեան մը կանգնած էր Դերջան գաւառին մէջ։ Իրանեան ցեղին պէս մեր բազիններն աշտարակածէ էին, բարձր զղեակներուն վրայ, և այսպէս կը գուշակեմ որ եղած են անոնք, զի Ագաթանգեղոսի մէջ յիշուած զղեակ բառն շատ մեծ յատկանիշ մըն է, զի մի և նոյն սովորութիւնն ունէին նաև թէ պարսիկներն և թէ ասորիները, զղեակի պէս բարձր աշտարակներ էին բազինները որոնց զագաթը կը գտնուէր աստուածութեան կուռքը. և ընդհանրապէս այդ մեհեանները ըստ պարսկական և հայկական սովորութեան բարձրագիւր բլրան մը վրայ կը կանգնէին։ Անոնք թագաւորական գերեզմաններու քով կը շինուէին, այդ արդէն հզօրացական ցեղին ալ սովորութիւնն էր։ Նորագոյն հետազոտութիւնն ցոյց տուաւ որ Սփինքսը թէ՛ մեհեան էր և թէ շիրիմ։

Մեր պատմիչները կը յիշեն ուրիշ աւելի նշանաւոր մեհեան մը՝ ծանօթ Վահեփառնեան մեհեան անունով Տարօնի մէջ։ Հայաստանի պաշտած երրորդ աստուածը Վահագն հոն ունէր իր բազինը։ Ամենէն հարուստ մեհեանն է համարուած ասի։ Ագաթանգեղոսի մէջ կը կարդանք այս մեհեանին համար հետեւեալ տողերն. «Էւ իբրև եկն եհաս ի սահմանս Հայոց, լուա Գրիգորիս՝ թէ Վահէվահեան մեհեանն փառքեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոսկով և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ, ութերորդ պաշտօն հռչակեալ, անուանեալն վիշապաքաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի ի մեծ լեռան Տաւրոսի, որ և անուանեալ ըստ յաճախապաշտաման տեղեացն Յաշտիշատ։ Զի յայնժամ ևս զեռ շէն կային երեք բազինքն ի նմա։ Առաջին՝ մեհեանն Վահէվահեան. երկրորդ՝ Ոսկեմօր ոսկեծին դիցն, և բազինն իսկ յայս անուանեալ՝ Ոսկիահատ Ոսկիամօր դիցն. և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, սենեակ Վահագնի կարդացեալ ըստ յունականին, որ է ինքն Ափրդիտէս»։ Ահաւասիկ այս տողերն որոնք ցոյց կու տան որ Աշտիշատի մեհեանն պատկառելի կոստուն մը եղած է ուր յատուկ առանձին բազիններ ունեցեր են Հերակլեան Վահագն, Ոսկիահատ մայր Անահիտ և Աստղիկ։ Այս ամենը ի միասին ծանօթ էր Հերակլեան Մեհեան անունով. «ի ձեռաց մեծին Գրիգորի, յաւուրս յորում կործանեաց զթագինսն մեհենիցն Հերակլեայ՝ այս ինքն Վահագնի, որում տեղոյ Աշտիշատն կարդացեալ»։ Ուրեմն Աշտիշատի մէջ մենք ունեցած ենք ամենէն հարուստ կոստունը. և կրնանք գուշակել որ հոն եղած պիտի ըլլան զմայլելի մեծագանձ նուէրներ, որոնք թագաւորներէ եղած ըլլալով, անտարակոյս վայելուչ գործեր համարուելու են, սակայն դժբաղդաբար ո՛չ թէ լերան վրայ՝ այլ Քարքեայ սնարը կառուցուած է Եփրատայ եզերքը։

Անահիտ շատ աւելի գուրգուրանքով պաշտուած է Հայաստանի մէջ, ու շատ հին է Անահտական պաշտումը. Երեզայի մէջ Անահիտ ունեցած է իր ոսկի արձանը. Անտոնինոս հոն պատերազմ մղած ատեն՝

իր զինուորները այդ արձանը կը փշրեն և կը հալեցնեն. անտարակոյս արուեստի շքեղ հրաշալիք մը կը քանդուէր: Գիտնականները ըստ իրենց հետազոտութեանց կը համարին որ Երիզայի մէջ պաշտուած Անահիտը նոյն ըլլալ ինչ որ կը յիշէ Մոմսէն յԵլիմայիս եղածն՝ Նանէ կամ Արտեմիս անունով, որ ըստ հուշակաւոր պատմիչին «Ամբողջ Եփրատեան նահանգին մէջ ամենաճոխ և մեծահանդէս հռչակուած էր»: Երիզայի Անահիտին յիշատակութիւնը կ'ընեն նաև Կիլերոն և Պլինիոս, ասոնց նկարագրութիւնն կը գուշակուի որ ժողովուրդը շատ մեծ կարեւորութիւն տուած է իր դիցունհայն երբ Լուկուլլոս Հայաստան կը մտնէ, հայ ժողովուրդը զարհուրելի կերպով կը յուզուի. ամէն բանէ աւելի կը մտածուի Անահիտի մեհեանը, ուր աստուածուհին կը պաշտուէր «ա. մենաճոխ և մեծասպաս պաշտամունքով» Կիլերոնին քացատրութեամբ: Ժողովուրդը կ'ուզէր փրկել այդ մեհեանը, չէր ուզէր որ անի կողոպտուի: Արուեստի այս սիրուն հրաշալիքը կը ծանօթացնէ Պլինիոս: Կ'ըսուի թէ՝ անի ամբողջովին համակ ոսկի արձան մըն էր, մէջը Լեցուն, ո՛չ դասարկ, որով կը կոչուէր Բոլորաճոյլ, ամենամեծ արժէք մ'ունեցած է այդ արձանը. Պլինիոսի յիշատակած մէկ պատմութիւնը կը հաւաստէ ըսածս: Բոնոնիացի զօրական մը՝ մեծն Օգոստոս կայսեր խնջոյք մը կու տայ, ահա նոյն ասոնց այդ զօրականին կը հարցուի թէ ստոյգ է արդեօք, որ Անահիտի արձանին ան որ առաջին անգամ մօտեցեր է կողոպտելու համար, իսկոյն կուրացեր, անդամալոյծ է եղեր ու մեռած. զօրականը կը պատասխանէ որ Օգոստոս մեծն այդ պահուն խնջոյք կ'ընէր նոյն արձանին սրունքին զինովը... և թէ ինքն էր այդ առաջին կողոպտողը և այդ կողոպտւտով անի շատ հարստացած էր: Եւ այսօր քանը գաղափար մը կրնայ տալ թէ ինչպիսի՜ արձան մը եղած պիտի ըլլայ Երիզայի մէջ պաշտուած Անահիտը:

Մտաբոյն յիշատակելով այս արձանը. կ'իմացնէ որ հարմնցու կոյսեր կը նուիրուէին Անահայ. «Այն տեղ սպասաւորներ և աղա-խիներ կը նուիրեն անոր. և այս այնքան զարմանալի չէ, այլ նաև այդ ազգին ազնուականները անոր կ'ընծայեն իրենց կոյս աղջիկները, որոնք ըստ օրինի շատ ժամանակ պղծութեանց տալով իրենք զիրենք դիցունհայն մօտ, վերջը կ'ամուսնանան, ու անոնց հետ կ'ենակցելը ոչ ոք անարժան բան մը կը համարի»: Այս յիշատակութիւնը կ'ընէ նաև Հ. Ալիշան: Եւ տարօրինակ չէր. հեթանոսական ինչ ինչ պաշտամունք հին հայերէն ընդունուած են. վաղեմի հնդկական կուտանաց մէջ ալ ընդունուած էր այդ սովորութիւնը: Հարմնցու կոյսը նախ կը կենակցէր քուրմին հետ, յետոյ իր օրինաւոր ամուսինին հետ:

Կուտունները ունէին իրենց բազմամարդ քրմական պաշտօնաշ-ները, անոնց համար յատուկ շէնքեր կանգնուած էին. արուեստի ինչ ոճով շինուած էին անոնք՝ այդ չի գիտցուիր: Պատմութիւնը միայն կը յիշատակէ որ այդ կուտունները ունէին զղեակներ, պարիսպներ, մեծաբլին աշտարակներ, անտարակոյս անոնք շինուած էին յատուկ ճար-տարապետութեամբ ու արուեստով: Երբ սուրբ Գրիգոր զօրքերով միասին Երէզ գաւառի Անահայական մեհեանը կը կործանէ, քուրմները բազմու-թեամբ կը զիմարդնեն. և սակայն ոչ երկար ատեն. յետոյ նուաճուած խոյս կու տան և ահա նոյն ատեն «կործանեալ բարձրաբերձ պարիսպն

հարթեցան»։ Այս ամենէն կը հետեցնենք որ հին հեթանոս շրջանին մէջ Հայաստան ունեցած է արուեստի գործեր, հրաշալի արձաններ, բազմահարուստ մեհաններ, մեծակերտ մեհան — դղեակներ, աշտաւակակիր բարձրաբերձ պարիսպներ։

Գեղարուեստական գլուխ գործոց արձան մըն ալ պաշտուած է Հայաստանի թորդան գիւղի մէջ, ծանօթ Բարշիմիս անունով. Մեծ Տիգրան ըստ խորենացի պատմիչին «իջանէ ի Միջագետս, և գտեալ անդ գիարշամինայ զպատկերն, զոր փղոսկրոյ և ի բիրեղէ կազմեալ էր արծաթով, հրամայէ տանել կանգնել յաւանին թորդան»։ Այդ արձանը ունէր բիրեղէ սպիտակափառ շլացուցիչ աշուրներ. Սուրբ Գրիգոր ըստ Ազարմանգեղոսի այս աստուածութեան բազմին ալ կը կործանէ և կը փշթէ այն հրաշալի արձանը։ Այս աստուածութիւնն և անոր կուռքը բնիկ հայ չէ, այլ կողոպտուած Ասորի ազգէն. անի նախ դիցազ մըն էր թշնամի մեր Վահագնի, վերջը աստուածացած է։

Արքայական շիրիմները պատուելու համար, անոնց վրայ կը կանգնուէին Բագիններ. Նաւասարդի հանդէսները հոն կը կատարուէին։ Մեհնական պատմութիւնէն՝ խորենացին կը յիշատակէ այդ առթիւ այս տեղեկութիւնը. «Պատմէ (Բարդածան) ի մեհնիցն պաշտամանց, վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Մաթանայ քրմապետի ի բազնացն աւանի, որ ի Բագրեանդ գաւառի, բազին ի վերայ գերեզմանին շինեալ, զի ի գոհիցն ամենայն անցաւորք վայելեացն, և ընդունեսցին հիւրք երեկօթիւք։ Յորում և զկնի Վահար՝ տօն աշխարհախումբ կարգեաց ի սկզբան ամի նորոյ, ի մուտն նաւասարդի»։ Այս գրութիւնէն դիւրին է գուշակել թէ ինչ աստիճան մեծ շէնք մը կառուցուած է հոն ուր մեծամեծ հանդէսներ կ'ըլլային, ուր հանդիսականները կրնային իբրև օթեան գիշերել։

Ուրեմն մենք ունեցեր ենք պաշտուած կուռքերու արձաններ, որոնք ընդհանրապէս փոխադրուած են Ասորեստանէն և Յունաստանէն։ Յուսական արձաններուն համար խորենացին կը գրէ. «Եւ գտեալ յԱսիա պղնձաձոյլ ոսկէզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպոլոնի, տայ բերել յաշխարհս մեր զի կանգնեսցին յԱրմաւիր։ Ջոր առեալ քրմապետացն, որ էին յազգէ Վահուենաց, զԱպոլոնի և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր. իսկ զՀերակլեայն զառնապատկերն, զոր արարեալ էր ի Սկիդեայ և ի Դիպինոսէ կրետացոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի, կանգնեցին ի Տարօն իւրեանց սեպհական գիւղն յԱշտիշատ, յետ մահուանն Արտաշիսի»։

Ուրեմն յայտնի է որ արուեստաւորներն կրետացիներ են, և ուրիշ կերպ կարելի չէր, զի հայ աստուածութիւններն ալ փոխառութիւններ էին։ Եւ այդ կուռքերուն պաշտօնեայններն թէև Հայաստանի մէջ կը զանուէին, սակայն արձաններուն հետ օտար երկիրներէ բերուած են այդ կուռքերը. մեր արքայները մեծ խնամքով պատուած են զանոնք. յազ-

Թանակի օրերուն՝ մանաւանդ Հայաստանի «յօթն բազինս մեհենիցն» զոհ կը մատուցուէր, և ուխտաւորութիւններ կը շարժէին դէպ ի այդ մեհենաները: Տրդատին հայրը Խոսրով՝ նուաճելով Պարսիկները մեծ հանդէսով երախտագիտութեան զոհեր կը մատուցանէ. այս առթիւ Ազաթանգեղոս կը գրէ. «Ապիտակ ցլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ շորովք, ոսկեղէն և արծաթեղէն զարդուք, ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ պալարակապ մետաքսիւք, և ոսկովք պսակօք, և արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով և արծաթով, ի հանդերձս պաշտօսս, և ի զարդս զեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիան մեծարէր»: Ահաւասիկ այս վկայութեան մէջ յիշատակուած են, թանկագին, ոսկի, արծաթ, ականակուռ նուէրներ, անշուշտ արուեստի հին գործեր, որոնց նկարագրութիւնը չկայ սակայն, ինչ որ յոյժ ցանկալի էր ունենալը:

* * *

Ունեցեր ենք մեհենաներ, զղեակներ, կուռքեր, ոսկեքանդակ անդրիններ, արքայական ոստաններ, շիրիմներ. ասոնք ամէնն ալ եղած են հայկական գեղարուեստի մը թարգմաններ:

Անոնց գոյութիւնը արդէն իսկ ցոյց կու տայ, որ մենք հայերս մեզի հետ շփում ունեցող մեծամեծ ազգաց հետ մշակած ենք գեղարուեստը, և քաղաքակրթական շրջաններէն անցած ենք միշտ յառաջադիմութեան հզօր ձգտումներ ունենալով:

Նպաստաւոր պայմանները հայկական ճարտարարուեստի զարգացումին օգտակար են եղած:


Մեհենաները բնաւ համանման ձև և տարածութիւն ունեցած չեն հռոմէական բազիլիքայներուն հետ. ասոնք՝ որ Քրիստոսէ 179 տարի առաջ գոյութիւն են ունեցած, ուր կատարուած են դառաստաններ, ասոնք՝ վերջը քրիստոնէական շրջաններուն՝ մեծ տաճարներու նախագիծն են եղած. ասոնց համեմատ շինուած են զեղեցիկ եկեղեցիներ, իսկ մեհենաները ընդհակառակն փոքր են եղած. որով հանդիսական ժողովուրդը դուրսը մնալով կը գոհանար քուրմերու երգերովը:

Պատմիչներու համաձայն նկարագրութիւններէն կը ցանց զապաւար կազմել մեհենական ճարտարապետութեան մասին. Քրիստոսէ վերջը եկեղեցական ճարտարապետութիւն մը կը սկսի Հռոմէայ և Բիզանդիոնի մէջ: Ու Յուստինիանոս կայսեր ժամանակ 527 — 542ի առոն, արդէն Բիզանդական սիրուն ճարտարապետութիւն մը օրինակ կ'ըլլար ամէն տեղ: Այս—Ոսփրան նախատիպարն էր ինքն իր զմայլելի զեղեցիկ ու պերճ ճարտարապետութեամբ:

Մեր հայկական վաղեմի եկեղեցիները կ'ունենան իրենց անկախ ճարտարապետական ձևերն: Ամենէն առաջ այդ ինքնուրոյն ձևն կը տեսնուի խաչաձև յատակագծին վրայ. խաչին վարի և վերի թևերն երկայն էին. ընդհակառակն հռոմէական խաչին երեք վերի թևերն փոքր են եղած, իսկ վարինը երկար, բիզանդականն ունէր խաչաձև յատակագիծ մը որուն չորս թևերը հաւասար էին: Բաց աստի մեր

Հայկական եկեղեցիները երկայն ու նեղ են, և ունին սրածայր զմբէթ բոլորշի որմով բարձր զլանածև: Հայկական փոքր եկեղեցիները մոյթեր չունին, այլ ամրութեան համար որմերը երկար անկիւն խորշերով կը հիւստին վերէն վար: Ասոնք ո՛չ իբրև զարդ, այլ իբրև նեցուկ կը ծառայեն շէնքին:

Շէնքերուն մէջ մուտք չունին գերաններ. անհաւասար մեծամեծ



«Տեկորի Տաճարը» ըստ Թորոս Թորամանեանի

քարերով շինուած են մեր վաղեմի եկեղեցիները: Տաճարներու դռներն ընդհանրապէս ցած են, քառակուսի կամ կամարածև: Պատուհանները սակաւաթիւ, նեղ և երկայն, գեղաքանդակ շրջանակներով զարդարուած:

Նախնական հայ ճարտարապետութեան սկզբնական տիպար կարելի է համարել վաղարշապատի Ս. Հովհաննէի եկեղեցին: Բաց աստի հնագոյն բնիկ ճարտարապետութեան սիրուն օրինակներ կ'ընդունուին Ս. Գայրանէի տաճարը, Յովհաննավանքի, Գանձասարի եկեղեցիները:

Լշմիածնի տաճարը ըստ Ագաթանգեղոսի շինուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի և Տրդատ Թազաւորի ատեն, որ և աւարտեալ է 303ին: Անշուշտ նախնական ձեռքը մինչև ցարդ մնացած չէ՝ բայց կը կարծուի թէ այժմեան տաճարը պահած ըլլայ իր նախկին ձևն և մեծութիւնը: Գաւառի տաճարը իսաւածն է. չորս սիւներ կը բռնեն գմբէթը: Մասամբ փայտաշէն է եղած հին ատեն. Մերուսման հիմնահատակ քանդել տուած է զայս. զրոյց գիւտէն առաջ յունական արձանագրութեամբ քանդակներ կ'երևին այժմեան տաճարին վրայ, անշուշտ մնացորդներ վաղեմի շէնքէն: Վահան Մամիկոնեան «հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց». այսպէս վկայած է Ղազար Փարպեցին: Ինչ որ կ'երևի՝ նախկին տաճարի յատկագիրը յունական խաչի ձեռք է եղած: Կարենցի Մահուտի Յոհան մէլիքի որդին Յակոբ՝ Վրեննայի մէջ 1731ին տպել կու տայ Ս. Գրիգոր Լուսաւորչի պատկերը. որուն մէջ Լշմիածնի տաճարին ձևը բոլորովին քարեր է: Ինչպէս եղած է նախնապէս . . . Նախնական ձևն ծանօթ է Պ. Թորոս Թորամանեանի «Տեկորի Տաճար» երկասիրութիւնէն:

Առ հասարակ մեր զեղեցիկ տաճարները ցոյց կու տան անկախ հայկական ճարտարապետութեան արուեստը: Մեր ճարտարապետութիւնը կը համարուի նոյն իսկ նախատիպ դաստիարակ արարականին. ու թէ՛ սիէ՛ հնախօսական վիճարանութեան պատճառ կ'ըլլայ, ըսելով որ Խալիպ մէջ գոթական ճարտարապետութիւնը մտցնողները հայերն են. . .

Սակայն ինչ որ ալ ըլլայ, մենք մեր հողին վրայ ունեցած ենք ճարտարապետական գմայելի արուեստի գործեր, որոնց հեղինակներն անունները սակայն անծանօթ են. կ'ըսուի թէ Տրդատ չեղովմէն Հայաստան գալուն՝ հետը ճարտարապետներ բերած ըլլայ: Ու պատմութեան մէջ ծանօթ է Տրդատ հայ ճարտարապետը որ կը համարուի վերաշինող Կ. Պուլոյ Այա-Սօֆիայի:

Սակայն կան ըսողներ որ Հայաստանի մէջ ճարտարապետութիւնը մեծ փոփոխութիւն կրած է այն ամէն շրջաններուն, երբ մեր վրայ խորապէս ազդած են օտար ազգեր, ըստ այսմ, նախ իրանեան ցեղի ճարտարապետութիւնը օգնութեան հասած է հայ ճարտարապետին ու յաջորդաբար, Բիւզանդական, Արաբական ու Եւրոպական ճարտարապետութիւնը պատուաստուած է հայկական արուեստին: Գառնիի մէջ կայ աւերակը Տրդատայ Թախտին որ ծանօթ է Խոսրովի դիտող հովաւնոց անունով, որ ըստ աշխարհագիր հեղինակաց կը համարուի Բիւզանդական կամ Հռովմէական ճարտարապետութեան գործ: Անիի հրաշակերտ շէնքերը կը համարուին Արաբական ոճով շինուած ըլլալ:

Բայց յամենայն դէպս, հայը՝ ինչպէս և ամէն ազգ՝ ընդօրինակելով օտարին գեղարուեստին նոր ոճը, միշտ պահած է ինքնագիւտ հանձարին յղաղում իր պարզում արուեստը:

Հայն ալ իր կարգին գեղարուեստի առաջնորդն է եղած իրմ ստորին ցեղերուն՝ Վրացիներուն, Աղուաններուն և Ասորիներուն և նոյն իսկ պահ մը վերջը նաև տիպար ճարտարապետութիւն մը ցոյց տուած է Արաբին և Բիւզանդական-Եւրոպական ցեղերուն. շրջաններուն համեմատ նախ աշակերտ և յետոյ վարպետ է եղած: Այս համոզումը ունին հինքէն Շուաքի, Նորքէն Սաշիկովսկի:

Ու կը տեսնենք որ ինչպէս ամէն ազգաց, այնպէս նաև մեր մէջ արուեստի գեղեցիկ յիշատակարանները կրօնքի հովանաւորութեամբ յայտնուած են:

Կրօնքի նպատակն է եղած ձգտում դէպ ի ձմարիտը, քարին, գեղեցիկը, որոնց ներդաշնակութիւնէն կը ծնի Գեղարուեստը:

Տաղանդաւոր արուեստագէտը իր զգացմունքի մագնիսական ուժովը պատաստին ու մարմարին վրայ կը մարմնացընէ մտքի և երեակայութեան հմայքոտ հրաշալիքը:

Մեր մէջ քրիստոնէութիւնէն վերջն ալ քաղաքակիրթ վիճակ մը չենք ունենար. արուեստի վրայ մտածող չկայ, և պատմութիւնը սև գծերով ուրուագրած է եկեղեցական հովիւներու պէմ մղուած ննջաւոր ապերախտ պայքարը. Արիստակէս, Յուսիկ կը սպանուին, Ներսէս Պարթև կը թունաւորեն, Կիլիկեան շրջաններու մէջ ալ դարձեալ մատնութիւններ խաղաղ չեն պահեր հայկական կեանքը: Հին ոսկեղէն հայերէն երթալով կը կորսնցնէ իր ցոլքերը:

Նախանձելի չէր նաև միւս ազգերու վիճակը: Իտալացիները մինչև ժ.Գ. դար տակաւին լատիներէն կը խօսէին: Սուրբ Անտոն Բատուացի լատիներէն կը քարոզէր, ինչպէս նաև հին Յուդայէն գաղթական հայութիւնը տակաւին այսօր Հնդկաստանի մէջ գրաբար կը գրէ նաև մակաները:

Արուեստի վերածնունդը ամենէն առաջ նշմարուած է Իտալացիներու մէջ: Ժ.Գ. դարուն Իտալացի արուեստն անզուգական բարձր է միւս ամէն ազգերէն: Իտալացին նոյն ատեն ամբողջ Եւրոպայի տիպար ցեղն էր համարուի իբրև գիտուն, իբրև հարուստ, իբրև քաղաքակիրթ և յառաջադիմութեան ու գեղարուեստի ռահվիրայ:

Եւ նոյն ատեն (1550) Անգլիացին ներքին պատերազմներով արդէն կործանուած, էր որսորդ, գեղջուկ ու պատերազմող ազգ մը: Բնակարաններն ողորմելի յարգածածք տնակներ: Բարձի գործածութիւնը կը համարուէր առանձնաշնորհուած ըլլալ միմիայն տղաբեր հիւանդ կնկան...

Նախանձելի չէր նոյնպէս Գերմանացի ցեղին կացութիւնը, կայսրը անզօր, ու պատերազմները քարուքանդ ըրած էին այդ ազգին վիճակը, ազնուապետականներն ալ տգէտ և տմարդի. ամենէն գիտուն համարուածն ալ կոշտ և զինեմով մըն եղած է:

Ողբալի է Ֆրանսայի վիճակը, Անգլիացին զանի ջլատեր ու նուաճեր է. Կարլոս Է-ի ատեն գայլերը համարձակ կը պտրտէին Բարիզու արուարձաններուն մէջ: Նոյն իսկ ազնուական համարուածներու կեանքն ալ նոյն ատեն եղած է գեղջկական և վայրենի:

Այս էր ամբողջ Եւրոպայի ներքին համայնապատկերը, գազանային բարբեր. Իտալիան բարձրավիզ՝ Հռովմայ և Ֆլորէնցի մէջ վերածնունդի կեանքը կ'ապրէր Լևոն Ժ.ին և Մ'ետրիչինբու գրօշին տակ:

Ժողովուրդը գիտցեր է ճանչնալ արուեստի ու տաղանդի արժանիքը, ամէն գոազէտ ու արուեստագէտ վարձատրութեան արժանացած է: Հռովմի մէջ բանաստեղծ Պէրնարտոյ Ազգովի հասարակութեան առջև ընթերցում մը ըրած պահուն, Ժողովուրդը կրպակները գոցելով հետաքրքրէր կ'երթար մտիկ ընելու բանաստեղծին գրութիւնը:

Ժողովուրդը միայն մէկ նպատակ ունէր, գեղարուեստն էր այդ:

*
* * *

Իսկական հայ արուեստի գեղաքանդակ բեկորները տակաւին թաղուած կը մնան, մանրագնին խուզարկութեամբ անշուշտ օրին մէկը կը յայտնուին անոնք. ունինք հսկայ տեղագրական հատորները Հ. Ալիշանին որոնք պատրաստուած չեն բնաշխարհին մէջ, այլ հաւաքած ծոյններու պտուղ հրակապ ատաղձներ ապագայ հայ արուեստի պատմութեան: Պ. Թ. Թորամանեան կը գրէ.

« Թող ոչ ոք չի պարծենայ հայ պատմութեան և արուեստների անունով իբրև հետազոտութիւն գոյութիւն ունեցող քանի մը ողորմելի հատորներով, այդ բոլորը բաղդատելով զսնուած նիւթերու անհունութեան հետ, ոչ միայն չնչին ու անշահ են, այլ իրենց բովանդակած հակասութիւններով ու աններելի սխալներով միանգամայն աննպատակայարմար են »:

Էւ այդ սխալները սրբագրելու համար՝ ըստ նոյն այդ տղերք գրողին, ամենակարևոր են անձնական անմիջական ուսումնասիրութիւններ տեւելոյն վրայ, որ նիւթական մեծ զոհողութեան կը կարօտին:

Ընդհանրապէս տեղագրական աշխատութիւնները կազմուած են եւրոպացի հեղինակներու ազդիւրներուն դիմելով, որոնց մասին կը գրէ Պ. Թ. Թորամանեան.

« Հայերէն տատնապատիկ աւելի է եւրոպացի գիտնական ճանապարհորդներու թիւը, որոնք շրջեր են Հայաստանը, հետաքրքրուեր են հայուն պատմութիւնով ու հին արուեստներով, սակայն անոնցմէ ալ մեծ օգուտներ չենք ստացած երբեք. մեծ մասամբ անոնք տպաւորուած թիւններ և ներբողներ են հիւսած հայոց պատմական գեղարուեստի շուրջը »:

Տասնեակ տարի մը անցաւ որ լսած ենք Զուարթնոց եկեղեցիին առթիւ եղած պեղումներու պատմութեան խուլ արձագանգը, ու երբ ուշադրութեամբ կը սպասէինք այդ պատմութիւնը ուսումնասիրող խաչիկ վ. Դադեանի հրատարակութեան, ահաւասիկ տակաւին լուծութիւն կը տիրէ, գուցէ մեկենասի կարօտը կը զգացուի. յամենայն դէպս նոյն պատմութիւնը ամենակարևոր է հայ գեղարուեստի փառքին համար:

Աղետասիրտ գիտնական բանասէր Ն. Մառ՝ Անիի պեղումներուն պատմութեան ձեռնհասօրէն ծանօթն է, բայց դժբաղդաբար իր հետազոտութիւնները հայերէն թարգմանուած չեն. ահա՛ գործ մը որ կատարելու է ուսահայ մամուլը:

Ամէն ազգ ամէն տեսն իր շրջապատ ցեղերէն ազդուած է, և փոխադարձաբար ինքն ալ անոնց վրայ ազդեր է. բարք, գրականութիւն և արուեստ հին նախնական շրջաններուն մէջ քիչ շատ համանման են ամէն ցեղերու մէջ. որոնք փոփոխութիւններ են կրած: Հայ գեղարուեստն ալ ունեցած է իր նախնական յատուկ շրջան մը, որ հարկ չէր որ զուտ ընդօրինակութիւն մը ըլլար, մանաւանդ թէ, պահ մը ինքն է եղած տիպար ճարտարապետութիւն մը. այս առթիւ կը յիշատակեմ Պ. Թ. Թորամանեանի սա բացատրութիւնը.

«Ճշմարիտ է, որ հայ գեղարուեստը յաճախ ենթարկուել է դրացի զարգացած ազգերու ազդեցութեան, սակայն պարզ բաղդատութիւն մը բաւական է ապացուցանելու, որ անհամեմատ աւելի շատ են ստեղծագործութիւնները քան փոխառութիւնները : Փոխառութիւնները ալ հազիւ թէ գործածուած են նոյնութեամբ առանց զանոնք հայացնելու : Եւ ինչքան իրենք ազդուել են օտարէն, նոյնչափ ալ ազդել են իրենցմէ շատ աւելի մեծ ազգերու վրայ» :

Տակաւին լուրջ ուսումնասիրութիւն պէտք է որ կարելի ըլլայ իմանալ թէ փոխադարձ ազդեցութիւնը ինչ աստիճան եղած է : Այս մասին ակնարկած ենք մեր նախընթաց էջերուն մէջ :

Ունեցած ենք բազմաթիւ տաճարներ, որոնց ամենէն հիւնքն հողին տակ թաղուել մոռցուել են. հին Էջմիածինն մէկ քանի անգամ հիմնու վին շինուած է, որով կարելի չէ ամենէն նախնական ձևին վրայ ճարտարապետական որոշ գաղափար մը կազմել : Ունինք կիսաւեր Տեկորի տաճարը որ նոյնպէս զանազան դարերու շրջաններու մէջ շատ փոփոխութեանց ենթարկուած է : Ահա տաճար մը որ գոյութիւն ունի հազար վեցհարիւր տարիներէ ի վեր, և որուն վրայ ճարտարապետական ուսումնասիրութիւնները կրնան հայ արուեստի պատմութեան օգտակար ըլլալ : Պ. Թ. Թորամանեան հատոր մը կը նուիրէ այս տաճարի ուսումնասիրութիւնը կատարելով : Մանրամասն բացատրութիւնները չափազանցութեանը մէջ օգտակար են հայ ճարտարապետական ուսումին. հեղինակին այդ գրութիւնէն շահեկան կը համարիմ յիշատակելու իր այս դիտողութիւնները :

«Հայ արուեստը, եթէ ուշի ուշով քննենք օտար արուեստներու իր վրայ ունեցած ներգործութեան տեսակէտով, անոր մէջ մինչև իսկ ամենահին Ասորա-Քաղդէական արուեստներու զօրեղ գծեր կը գտնենք. ասկէ զատ ոչ նուազ զգալի են Սասանական և Սիրիական արուեստներու հետքերը : Սակայն գտնուել են դարաշրջաններ, որոնց մէջ Յունա-Հռոմէական արուեստներն ալ իրենց ներգործութեան դրոշմը թողել են հայ ճարտարապետական արուեստին վրայ : Ինչպէս հին Ասորա-Քաղդէական և Սասանական, նոյնպէս Յունա-Հռոմէական արուեստներու ներգործութիւնները երկարատև չեն եղած, շուտով ձուլուած են հայ արուեստի որոշ ինքնուրոյն ոճին մէջ և լիովին կերպարանափոխուած են :

«Յունա-Հռոմէական արուեստի հայ ճարտարապետութեան վրայ թողած ներգործութեան դրոշմը ես կը տեսնեմ Երզ դարէն սկսած դէպի յետ հին դարերը, յետոյ ալ 10 և 11րդ դարաշրջաններու մէջտեղ : 7րդ դարու Զուարթնոցը, բացի յատակագծի ոճէն, բոլորովին բացառութիւն է Յունա-Հռոմէական արուեստի վերջին աղօտ շառաւիղները իր վրայ ցոլացնող» :

Եւ որովհետև Տեկորի տաճարը իր նախնական հնութիւններէն տակաւին դրոշմներ ունի իր վրան, զայն քննութեան ենթարկելով Թորամանեան անոր յատուկ փոխառեալ Յոյն-Հռոմէական ոճէն կը հետեցնէ որ ըլլայ հինգերորդ դարու շէնք, Էջմիածնի Կաթողիկէէն առաջ շինուած :

Մենք յիշեցինք գրութեանս նախորդ էջերուն մէջ, որ ունեցած

ենք փոխառեալ աստուածութիւններ և պաշտամունք մեր պատմական շրջաններու մէջ. անշուշտ նաև ճարտարապետական արուեստն ալ փոխառութիւն պիտի ըլլայ. այս ենթադրութիւնը շատերուն ողջամիտ է երևցած, սակայն խնդիր է գիտնալ որ մեր հնդեղեցական ճարտարապետութիւնը արդեօք նախնական օրերուն պահած է հեթանոս շրջանի մեհաններուն ճարտարապետական ձևերը: Պ. Թ. Թօրամանեան կը համարի թէ հին մեհանները թրիստոնեայ տաճարներու տեղ գործածուած ըլլան, սակայն ըստ պատմութեան նման վկայութիւն մը չկայ. բնդակառակն Ս. Գրիգոր Լուսաւորիչ ամէն ջանքի գործ դրած է և քննել տուած է մեհանները՝ նոր եկեղեցիներ կանգնել տալով: Անշուշտ այդ նոր եկեղեցիները ունէին յատուկ ճարտարապետական ձև մը, աւելի նման հին մեհաններուն, զի նաև ի Հոռմ նախնի Պագիլիքեաները հեթանոս դարերու շէնքեր էին և յետոյ նուիրագործուեցան եղան թրիստոնեայ տաճարներ. գուցէ հին տաճարներուն արտաքին ձևը պահուած ըլլալը բնաւ արգելք մը եղած չըլլայ հայ թրիստոնէութեան: Ես կարծեմ որ նոր կանգնուած հայ տաճարները պահած կ'ըլլան Յոյն-Հոռմէական մեհաններու ճարտարապետական ձևը. այդ ձևը զգալի տեսնուած է Տեկորի, Մրենի, Երեւոյքի, Փասախի և Աշտարակի վաղեմի եկեղեցիներու յատակագծին վրայ:


Մեր հնագոյն ճարտարապետական արուեստին ամենէն գեղեցիկ մասերը, ըստ Թօրամանեանի, օտարամուտ են՝ Յոյնէն, Հոռմէն, Ասորիէն փոխառեալ. ըստ իս՝ այս խնդրոյ նիւթ է և դրական փաստներու կարօտ:

Ու դարձեալ ամենէն շահեկան կէտն է գիտնալ վաղեմի հին արուեստագէտ տաղանդներու անունն, ծանօթ են ճարտարապետներ Տրիդատ և Իսլամացած Ախլաթցի ճարտարապետն որ ժԱ. դարու մէջ Գոնեայի Ալայետտինի մզկիթին ամպիոնը կը շինէ: Ընդհանրապէս ո՛վ որ ստակ կու տար եկեղեցւոյ շինութեան համար, անոր անունը կը յիշատակուէր: Փագիկ Ա. Խօթներորդ դարուն մէջ Անիի պարծանք կանգնել կու տար սուրբ Գրիգոր հոյակապ տաճարը, որուն ծիրանածաղիկ և ոսկեթել զարդարանքներու արուեստագէտին անունը սակայն անյիշատակ կը մնայ: Փագիկ Թագաւորին կը մրցակցի Խեղճ հովիւ մը և կանգնել կու տայ զմայելի գեղեցկութեամբ Հովիւի եկեղեցին, բայց ո՛վ էր անոր ճարտարապետը, բարեբար բարեպաշտ հովիւ...
 Իսկ անդրիագործ հայու անուն ամենադժուար է գտնելն. վաղեմի շրջաններուն մէջ կը տեսնենք սիրուն քանդակներ եկեղեցիներու որմերուն վրայ, սքանչելի խաչքարեր, որոնք են անոնց արձանագործ հեղինակները. դարձեալ մոռացութիւն... Վենետիկի Ս. Ղազարու Թանգարանին մէջ կայ խորաքանդակ փոքրիկ արձանիկ մը, շինուած



Աստուածամայրը Յիսուս մամուկը գրկել տաւ

արեւելեան ակադոմ, կը ներկայացնէ Աստուածամայրը Յիսուս մանուկը գիրկը առած, զայն շինած է հայ արձանագործ Ալէքսիանոս 1166ին և այդ սիրուն գործը գտնուած է Անիի մէջ*:



Արձանագրութիւն **

Մեր ազգային գրչադրաց մատենադարաններու վաղեմի յուշարձան մատենաներուն նկարչագեղ մանրանկարները կը հաւաստեն որ մենք հայերս ունեցած ենք նաև նկարիչներ, սակայն այդ արուեստին մէջ ալ ընդհանրապէս նկարիչներուն անունը յիշուած չէ:

Մենք տեսանք որ կրօնական շէնքերու ճարտարապետական արուեստը վաղուց ծաղկած է մեր մէջ, և տեսանք որ մեր վրայ ազդեր են մեզի հետ յարաբերութիւն ունեցող ազգեր, և մենք ալ պահ մը ազդած ենք ուրիշներուն վրայ մեզի իւրացուցած գեղարուեստով. անտարակոյս այսպէս եղած է նաև մանրանկարչութեան արուեստին մէջ:

Որոշ փաստեր կը պակսին մեր հնագոյն մանրանկարներուն մասին խօսելու համար. զի հարկ է ունենալ է. դարու ձեռագիր մանրանկարուած գործեր, ինչ որ տակաւին յայտնուած չեն, որով հարկ է ամենէն ծանօթ հին ձեռագիրներն ուսումնասիրելով գոհանալ այս մասին:

Ինչ որ պատմութիւնը կը հաւաստէ, ամէն ազգաց մէջ մանրանկարչութիւնը սկսած է թագաւորներու նուիրելով ձեռագիր զարդանկար մատենաներ, որոնք կը պատրաստուէին ճարտար արուեստագէտներէ: Մեր մէջ ալ նոյնպէս եղած է, հայրապետներու, թագաւորներու և թագուհիներու նուիրուած մատենաները զմայլելի զարդանկարներ կը պարունակեն: Էջմիածնայ մատենադարանն ունի 1066ին գրուած Ներսէս Դնորհալիին նուիրուած աւետարան մը, որ զարդարուած է մանրանկարներով՝ մրցակից բիւզանդական մանրանկարչութեան:


* Թանգարանին մէջ արձանին կից կայ այս ծանօթագրութիւնը.

«Չայս մարմարինեայ պատկեր արձանագործ Տիրամօր կուսի երեք ի վանս Քերովրէ Կարնեցի, որ է Վ. Հ. Սինն Վ. ճուլարեան յամի 1830 հոկտ. 15. զոր գտեալ իցէ հաւ հաւուն իւրոյ Պէզազ Սահակ (ի 1721) ութսուն ամօք յառաջ աւելի կամ պակաս ի փլատակս մենաստանի ուրուք ի Հայաստան. յորմէ մարթ իցէ ումեք զուցէ ի կարծիս լինել թէ նշանաւ կեալ Թուականն ԽճՈՐՁ, իցէ Փրկչին թիւ և ոչ Հայոցն. թէպէտ և առաջինքն քան զառաջինն երկրորդաւն վարել յաճախ առին սովորութիւնս:

Այս պատկերին հետ հրատարակած ենք նաև արձանին ետևն փորագրուած արձանագրութիւնը որ է.

** «Աստուծոյ կարողութեամբ ես Ալէքսիանոս ամարժամս շի. (շինեցի) ով պատահի իմծ ողորմիս տայ: թվ. ԹՃԾԶ»:

Վեհափիվ գեղարվեստական ցուցահանդեսի լիցիտացիոն զին անշուշտ



Հայ մանրանկարչութեան զբաղող յարգելի մասնագէտ Գարեգին վարդ. Յովսէփեան կը գրէ. «Մանրանկարչական արուեստի և հայ գրչութեան ծաղկման ոսկեդարը պիտի համարել ժ.թ. դարու վերջեւեց մինչև ժ.թ. սկիզբը: Լևոն Բ.ի, Հեթում Ա.ի, Լևոն Գ.ի և նորա որդի Հեթում Բ.ի ժամանակ կիրիկիայում ծաղկում է մի այնպիսի գրչութիւն ու արուեստ, որ մրցել կարող էր ժամանակակից բոլոր ազգերի նոյն կարգի արուեստների հետ: Հայերը սերտ յարաբերութիւն ունէին ոչ միայն իտալիկներին, այլ և Բիւզանդացիներին հետ»:

Անուանի են Դերոսէս Լամբրոնացոյ Դարեկի զարդանկարներն, Յակոբ Կլայեցի կաթողիկոսի Աստուածաշունչի նկարներն, Լևոն Գ.ի զմայլելի ճաշոցը և այլն, որոնք Էջմիածնի մատենադարանին թանկագին պարգեւն են:

Յայտնի մեծագին արուեստագեղ զարդերէն մէկն ալ կը ֆնայ Վենետիկի Միխիթարեան ձեռագրաց թանգարանին մէջ՝ Մլքէ թագուհիին աւետարանը, նախշուն մեծադիր նկարներով զարդարուած, որուն նմանատիպ հրատարակութիւնն ալ լոյս տեսած է մեր վանքի տպարանէն: Այդ մի և նոյն մատենադարանին մէջ ի միջի այլոց արուեստի տեսակէտով հետաքրքրական է Աղեքսանդրու վարքի պատկերազարդ ձեռագիրն ժ.թ. դարու գործ:

Մանրանկարիչ է յիշուած անունով Սարգիս Պիծակը որ նկարած է Լևոն Գ.ի պատկերը գոր. Հ. Ալիշան արդէն հրատարակած է իր Սխուանին մէջ:

Եթէ լրջօրէն ուսումնասիրուի մեր գեղարուեստի պատմութիւնը մեծ և ընդարձակ ասպարէզ կայ ուսումնասիրողին համար, բայց տակաւին շատ թեթեւօրէն կը մտածուի այս ճիւղի մասին. Ստասով, Փեթրոկրատի գեղարուեստի մատենադարանապետ, Պ. Գ. Լևոնեանի զիտել կու տայ այս յայտնի ճշմարտութիւնը. «Պարոն, դուք հայերդ անտարբեր էք դէպի ձեր պատմական թանկագին յիշատակարանները. գեղարուեստի, երաժշտութեան պատմութիւններ են լոյս տեսնում՝ և ո՛չ խօսք մի հայոց մասին, որովհետեւ ոչինչ չկայ հրապարակի վրայ մասնագիտօրէն քննած, լուսարանած: Բայց, ներքեցէ ասել, մենք օտարներս համեմատաբար շատ աւելի բան գիտենք ձեր գեղարուեստի մասին, քան դուք: Էջմիածինը, Էրուսաղէմը, Վենետիկը անսպառ աղբիւրներ են պարապօղի համար, եթէ միայն չի պակասում ձեզանում գործի պատրաստականութիւն, համբերութիւն և կամք»:

Հրատարակուելով զըջազրաց ցուցակը, քիչ շատ կարելի է նիւթ գտնել մեր նախնի մանրանկարչութեան արուեստին վրայ. կը ֆնայ ամենէն արժանաւոր գեղեցիկ մանրանկարները ուսումնասիրել ուղղակի բնագրին վրայ, ինչ որ շատ դժուարին է, զի ձեռագրաց բազմութիւնը զանազան հաստատութեանց սեփականութիւնն է դարձած. մասնագէտն հարկ է որ այդ ամէն տեղ այցելէ և լրջօրէն զբաղի այդ գործով:

Զարդանկար ձեռագրաց յիշատակարանները աղբիւր են մանրանկարչութեան պատմութեան, բայց դժբախտաբար ամենէն գեղեցիկ գործերու հեղինակները համեստութեան համար իրենց անունը յիշատակած չեն: Հ. Յ. Տաշեան վարդապետ իր հոյակապ գրչագրաց ցուցակին մէջ հաւաքած ամենահին ծաղկեալ ձեռագիրն կը համարի 1223 կամ

1261 թուականին գրուած ճաշոցը, որուն նկարիչը կը գուշակէ ըլլալ Յովհաննէս երէց Բարեղոյի: Երբեմն մի և նոյն հեղինակը չէ որ կը զարդարէ ձեռագիրը, այլ և ուրիշներ ալ տարբեր ժամանակներու մէջ կը մասնակցին ձեռագրին զարդանկարչութեան, ինչ որ պատահած է այս հնագոյն գեղեցիկ ձեռագրին, ուր մուծուած են չորս աւետարանիչներու, երկրպագութեան և յարութեան և ուրիշ նկարներ, որոնց նկարիչը անծանօթ է: Երբեմն ալ օտարազգի նկարիչներ զարդարած են մեր ձեռագիր Աւետարանները, բայց մեր մէջ ալ պակաս չեն հայ զարդանկարիչներ, որոնց անունները յիշատակուած են ձեռագրաց յիշատակարաններու մէջ. Թողլով նորերն, կարելի է յիշել հիներէն Դրագարկ գտնուող Կիրակոսը որ կը զարդարէ 1239 թուականի ճաշոցը. Ստեփանոս Թուրկուրանցի (1388), Բերդձորցի Մարգարէ քահանայ (1337). Խաչատուր Կրօնաւոր (1312). Ամիթցի Գրիգոր քահանայ (1305). Գրիգոր Սերաստացի (1351) և այլն:

Նկարիչ հայ անձնաւորութիւններէն զատ եղած են նաև նոյն ձեռագրաց յատուկ կազմարարներ. հնագոյն ճարտար կազմարարներէն մէկն է Սիմէոն Սերաստացի (1222). Կեսարացի Մալխաս Մ. Կարապետ (1671) ունի յաջողագոյն արծաթ քանդակներով կողքեր:

Մեր վանական ձեռագրաց մատենադարանին մէջ, ունինք հայ գեղարուեստի հաւաստիք գեղեցիկ ձեռագիր մատեաններ, որոնց նմանատիպ ընդօրինակութեանց տպագրութեամբը կարելի է կազմել էջ մը մեր ազգային գեղարուեստի պատմութիւնէն: Ամենէն աւելի ուշագրաւն են Արծրունեաց Թագուհի Մլէխի Աւետարանի շքեղ նկարները (851-922). որուն ծաղկողը անյայտ է: Ուրիշ նկարագեղ ձեռագիր մատեաններ կան (911-1007) որոնց նկարիչներուն անունը ծանօթ չէ:

Զմայելի են Տրապիզոնի Աւետարանի զարդերն, ծաղկանկարներն և պատկերներն. նկարչին անունը ծանօթ չէ. գրուած կը համարուի Ժ-ԺԱ դարուն: Կայ նաև ԺԱ դարու աւետարան մը սիրուն մանրանկարչութեամբ, նկարիչն է Վարդ:

Կը յիշենք 1193ին Ն. Լամբրոնացոյ ընծայուած աւետարանը, որուն ճարտար նկարիչն է Կոստանդին Կրօնաւորը:

Նկարներու շքեղութեամբ շահեկան կը գտնեմ յիշելու 1648ին գրուած Աստուածաշունչը, որուն նկարիչն է Հէրապետ. սա իր յատուր, Աղամալ և Գալուստ աշակերտներով զարդարած է այդ ձեռագիրը:

Մեր մանրանկարչութեան արուեստը օտարներէն շատ գնահատուած է. Վլատիմիր Ստասով ուսումնասիրելով Վենետիկի մեր ձեռագրատան մանրանկարները, ի միջի այլոց, Վարդ նկարչի Ժ-ԺԱ դարու աւետարանին համար գրած է. «Հայկական տարրն յայտնուած է այստեղ զգալիօրէն. կարգ մը առանձնայատկութեանց միջև կրնանք մատնանիշ ընել սիւները, խոյակները, հիմնաքարերը և առհասարակ ամէն շէնքերը որոնք բացարձակապէս աննշմարելի են Բիզանդիոնի մէջ: Մանրանկարներու վրայ տեսնուած դիմանկարները ճշգրտօրէն հայկական են»:

Անտարակոյս նկարչութեան արուեստը սահմանափակ մնացած չէ լոկ ձեռագրաց մէջ. վաղեմի հայ տաճարներու մէջ տեսնուած են հելլենական կուռքեր, բայց նախնի քրիստոնեայ հայ տաճարները չեն

զարդարուած որմանկարներով, պարզութիւնը աւելի գերադասուած է. բայց ոչ միշտ է. դարէն սկսեալ Բիւզանդական սովորութիւնները մտած են նաև հայ եկեղեցիներէն ներս, Էջմիածնայ տաճարը հին ատեն զարդարուած էր ջրաներկ որմանկարներով, որոնք Խրիմեան Հայրիկի օրով կը ջնջուին... Հայ եկեղեցիներու մէջ տեսնուած են է. դարէն սկսեալ իւզաներկ պատկերներ և նոյնպէս խալտաճաճով փայլուն մանր բարերով հիւսուած մուգայիբ զարդեր և նկարներ. այս մասին անուանի է Չուարթնոց եկեղեցին:

Մեր մէջ մի և նոյն ատեն հաւասարապէս կարևորութիւն տրուած է գեղարուեստի ամէն ճիւղերուն. տաճարներ կառուցուին են, անոնց զարդերը քանդակագործը կը ստեղծէր. նկար, մուգայիբ տաճարներուն զարդերն էին, ու անդրիններ կը ներկայացնէին աստուածութիւններ ուրոնց պաշտամանց նիւթ կ'ըլլային. ու երբ քրիստոնէութիւնը կը տիրէ, սուրբ գիրքերը յատուկ զարդերու կը կալօտէին ու այդ շրջանին կը սկսէր մանրանկարչութիւնը: Այդ գիրքերը յատուկ կազմեր ունէին, որոնց ծածրերուն շքեղութիւնը թարգման կ'ըլլար հայ ոսկերիչ արհեստաւորին ճարտարութեան:


Մենք ունեցինք ենք ճարտարապետ, նկարիչ, արձանագործ, ոսկերիչ և մանրանկարողներ, ինչպէս նաև երգագիր բանաստեղծ մտքեր. ամէն ալ թիչ շատ մեր վերածնունդի շրջանին ունեցած են իրենց յատուկ դերը:

Արձան, նկար՝ բազմաթիւ գեղարանդակ շէնքերու՝ շատ նուազ են Հայաստանի մէջ, անշուշտ ժամանակին անոնք ալ բազմաթիւ եղած պիտի ըլլան, բայց ժամանակը իր սպառող ազդակներով աւելի դիւրութեամբ զանոնք աւերակներու տակ թաղած է: Խնդիր է սակայն թէ գլուխ գործոց անդրիններն արդեօք հայկական գործե՞ր են եղած, թէ օտար երկրներէ փոխադրուած են անոնք: Բիրտանական թանգարանին մէջ կը պահուին պղնձէ արձանի մը գլուխն և ձեռքը որոնց մասին գրուած են ցուցակին մէջ այս տողերը.

«Պիլիմնեան սենեկին մէջտեղը բոլորշի սեղանի մը վրայ աստուածուհւոյ մը քնականէն մեծ գլուխ մը կայ, որ կ'ըսուի թէ Հայաստանի մէջ գտնուած է: Այս յունական արուեստին ամենէն ընտիր ժամանակի գործ եղող գլուխն, զոր ոմանք Ափրոդիտէ կոչեցին, և որ աւելի հաւանական է թէ Արտեմիսն ըլլայ, մասն մըն է Զախջախուած արձանի մը, որուն ձեռքը մի և նոյն ապակեայ տփոյն մէջ ի ցոյց դրուած է»:

Հնագէտ Էնկէլմանը հիացումով խոսած է այս արձանին և ձեռքին վրայ և կը համարի զայն Պրաքսիթելի Կնիդեան Ափրոդիտէս մը, յունական հրաշալիք մը. զլիսուն և ձեռքին համար կ'ըսէ իր ուսումնասիրութեան սկիզբը. «Երկուքն ալ գտնուած են Հայաստանի մէջ, Երևանէն քիչ հեռու, Տրապիզոնի հարաւային կողմը»: Պղնձէ են այս արձանին երկու կտորներն, որոնք անշուշտ Արշակունեան արքայական շրջանի Յունաստանէն Հայաստան բերուած պաշտամունքի կուռքերէն մնացորդն են պիտի ըլլան. մեր ազգէն պաշտուած, բայց ոչ մեր հայ արձանագործներէն շինուած:

Երգնկայի մէջ գտնուած է քանդակ պատկեր մը որ հեթանոս շրջ-



Սկևռայի սրբոց Նշխարաց պաճարանը

ջանէն մնացած է, որուն արձանագործին ո՛ր ազգէ ըլլալը անյայտ։ Հին Թորդանայ մօտ Դեղթափ կոչուած քանդակն ալ Աւագ վանքի մէջ կը պահուի, որուն նիւթը քարեղէն, բայց քանդակագործն ալ նոյնպէս անծանօթ է։ Զենոր պատմիչ կ'աւանդէ որ վաղարշակ Հնդկաստանէն գաղթած Դեմետրի և Գիսանէի կոստոններ կանգնեց Տարօն և Ապահունեաց գաւառներուն մէջ ուր կը պաշտէին հնդկական վիշապ կուռքը։ Հ. Ալիշան Պայազիտի մէջ գտնուած հեթանոսական քանդակն կը համարի թէ այդ վիշապ աստուածն ըլլայ։ Ատոր քանդակագործն ալ անծանօթ է։

Պեղումներով կարելի է երևան հանել հայ արձանագործութեան նմոշները. սակայն այս ալ ժամանակի կարօտ է։ Կեսարացի ոսկերիչները ձեռագրաց համար պատրաստած գեղեցիկ քանդակագործ արծաթ կողքերով ցոյց են տուած որ հայն ալ ունի քանդակագործութեան ճաշակ։

Սկևռայի վանքին սուրբ Նշխարաց պաճարանը որ կատարուած է կոստանդին պատրիարքի հրամանով 1293ին, հայկական գեղաբանդակ ճաշակին մէջ գմայլելի նմուշն կրնանք համարել։

Գեղարուեստի մասին՝ երգը տեսանք թէ ի՞նչ խանդով մշակուած է մեր եկեղեցական նախնի սուրբ վարդապետներու շնորհիւ. յատուկ երաժշտութիւն մը պահուած է մեր ցեղին մէջ, որ միշտ լալկան սըր-տաճմիկ ձգտումէն շեղած չէ, փոխադարձաբար ազդեցութիւն կրած է նաև հայ երգը:

Ժողովուրդը ինքնին կը ստեղծէ երգը. կոմիտաս վարդապետ վերջերս ժրաշան անձնանութիրութեամբ ձայնագրեց հայ ժողովրդական երգերը ու մենք տեսանք որ հայ մշակը, հայ լեռնցին՝ բնութեան ազդեցութիւնը կրելով ստեղծած է զանազան երգեր, որոնք ո՛րքան հայկական դրոշմ կրած են, կամ թէ զուտ հայկական ստեղծագործութիւն են՝ բն, ահա կէտեր՝ որոնք մերձաւոր ազգերու երգերուն հետ բաղդա-տական ուսումով կրնան ստուգուիլ:

Ամէն պարագային կարող չենք ըսել թէ դրական փաստերով կրնանք ապացուցանել, որ մենք հայկական ինքնուրոյն ստեղծական գեղարուեստ մ'ունինք որ մեզի սեփականութիւն ըլլայ բոլորովին:

Հ. Ս. ԵՐԵՄ.

ԼՈՅՍ ՈՐ ԶԻ ՏԵՍՆՈՒՐ

□ □ □

Երբ 1669ին և յաջորդ տարիներուն Նևտոն արեւու լուսոյ բաղադրութիւնը կը պարզէր ամբողջացնելով կարգեալութիւն ծիածանի վրայ ըրած դիտողութիւնները, չէր գուշակէր բնաւ որ ճառագայթի մը բիւրեղէ անցնելէն վերջ այնչափ գոյններու բաժնուիլը, ուրիշ բան չէր եթէ ոչ, ամբողջութեան փորձիկ մաս մը, և թէ գիտութիւնը հետզհետէ լուսապատկերի մութ մասին զարմանալի յատկութիւններն և բնան պիտի հանէր:

Ամէն ոք գիտէ թէ ծիածանի եօթը գոյները ի՞նչ բանի մէջ կը կայանան և ի՞նչպէս կը ձևանան. — թէ լուսոյ համար, որ եթերի թրթռացմամբ կը սփռի տիեզերաց մէջ, բացարձակ թափանցիկ մարմիններ չկան: Ուստի ճառագայթներու խուրձ մը բիւրեղէ մը անցած ժամանակ մաս մը անկէ կը ծծուի՝ մաս մ'աւ կը շեղի և կը կորսուի. և գունաւոր ճառագայթները (ուրոնցմէ բաղադրուած է ճերմակ լոյսը) իրարմէ տարբեր արագութեամբ ընթանալուն պատճառաւ կը բաժնուին եօթը գոյներու որ զուգախառնութեամբ մանրշա-

կագոյնէ, լեղակի, կապոյտի, կանաչի, դեղինի, նարնջագոյնի և կարմիրի կ'անցնի:

Աւելցնենք դարձեալ որ լոյսը մէկ վայրէ կենի մէջ 300 հազար քիլոմիտր կ'ընթա-նայ. և այնպէս՝ ինչպէս ձայնը կամ աւելին, երբ քար մը ջրոյ մակերևոյթ մը հարուածէ, 376 եռիլիոն է տեսա-նելի կարմիրի թրթռացումը և 750 մասնիշակագոյնինը. բաժնելով ապա լուսոյ արագութիւնը թրթռացման թիւերու հետ, կը ստացուի լուսաւոր ալիքները իրարմէ բաժնող միջոցը:

Սակայն միայն եօթը գոյները չեն ճեղձակ լոյսը կազմողները. ասոնք լուսաւոր կամուրջ մ'են երկու անտեսանելի մասերու, որոնցմէ մին չափազանց արագ և միւսը չափազանց դանդաղ ընթանալուն՝ աչքի անտեսանելի են. ինչպէս են ականջին համար սառստիկ սուր և թաւ ձայներն:

Լուսապատկերի անդրակալման մասը

Անդրակարմիր մասին վրայ մեր ունեցած ծանօթութիւններն որոշ են և գիտենք որ տեսանելի լուսապատկերէն ութ անգամ աւելի ծաւալ մ'ունի: Նուազ բեկ-բեկելի, այսինքն բիւրեղէն նուազ շեղում